կանութիւնը պահպանվում է, որ մի ազգը անթիւ ցեղերի են բաժանում: Ամեն մի քուրդ իւր ցեղապետի անպայման գիրքն է: Եւ ինչ կը լինէր մեր Տաճկաստանցի եղբարց վիճակը անցեալ մեծ սովին, եթէ մեր Նախարարական ցեղերը դեռ ապրել շարունակէին: Հաւատացնում եմ Ձեզ, որ ոչ մի հայ չ'էր ապրի պատուհասից. և մենք Տաճկա-Հայաստանումը այժմ ազգի տեղը Նորա ընդարձակ գերեզմանատունները կը գտնէինք միայն: Յովհաննէս կաթողիկոս, Առաքել պատմագիրը և ուրիշները սարսափելի պատկերներ են ներկայացնում սովի ժամանակում կատարված, թէ ինչպէս եղբայրը եղբօր սպանել է, հայրը իւր որդուն մորթել է, մայրը իւր աղջկան կերել է. բայց ոչ մի տեղ յիշված չը կայ, որ մի հայ միւս հային օգնած լինէր. մի կտոր հաց տուած լինէր:

Այսպիսի տխուր մտածմունքներ փարատելու համար, ես խնդրեցի Բրօյից, որ մի հեքիաթ ասի, իսկ ինքս պատրաստուեցի երկու քարի արանքումը քնել: Բրօն սկսեց պատմել, ինչ որ մի քուրդ ցեղապետի աննման աղջկան, Սալթանաթ խանի մի սիրահարական արկածները. բայց թէ ինչպէս վերջացաւ, այդ պէտք է Բրօից հարցնել: Խոստովանում եմ, որ խսկոյն քնեցի և կեանքումս այնպէս քաղցր քնած չէի:

Առաւօտ վաղ Բրօն վեր էր կացել, ման եկել և ճանապարհը գտել և վերադառնալով ինձ արթ-